ԱՊՐԵԼՈՒ
ԵՐԿԻՐ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

www.apreluyerevan.am

ԱՐԺԵՔՆԵՐ

1. ԱՊԱՀՈՎ ԵՐԵՎԱՆ
2. ԱՌՈՂՋ ԵՐԵՎԱՆ
3. ԽԵԼԱՑԻ ԵՐԵՎԱՆ
4. ԿԱՆԱՉ ԵՐԵՎԱՆ
5. ՀԱՍԱՆԵԼԻ ԵՐԵՎԱՆ
6. ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԵՐԵՎԱՆ
7. ՀՈԳԱՏԱՐ ԵՐԵՎԱՆ
8. ԲԱՐԵԿԱՐԳ ԵՐԵՎԱՆ

1. ԱՊԱՀՈՎ ԵՐԵՎԱՆ

	Ծրագիրը, նկարագրությունը	Ժամկետ	Շահառուներ
1.1.	**«Ավտովթարներից 0 մահացություն՝ «Vision Zero» հայեցակարգի ներդրում» (վթարների կանխարգելում)** Երևանը պետք է անվտանգ լինի թե տեղաշարժվելու և թե աշխատանքային գործունեություն ծավալելու համար: Իրականացվելու են համալիր քայլեր ճանապարհատրանսպորտային պատահարների թիվը զրոյի հասցնելու ուղղությամբ: Հայեցակարգը նոր չէ և բազմաթիվ զարգացած քաղաքներ «Vision Zero» շարժման անդամ են և Էական դրական առաջընթաց են գրանցել այդ ուղղությամբ	2 տարի	✓ Հետիոտներ ✓ Վարորդներ ✓ Մայրեր ✓ Սպորտի սիրահարներ ✓ Դպրոցականներ ✓ Տարեցներ, թոշակառուներ ✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ ✓ Զբոսաշրջիկներ ✓ Մայրաքաղաքի հյուրեր
1.2.	**Շենքերի ամրացում՝ նվազագույնը 9 բալ սեյսմակայունությամբ** **3-րդ և 4-րդ կարգի վթարայնության (քանդման ենթակա) շենքերի վերակառուցում՝ մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ** **Բազմաբնակարան շենքերի սեյսմակայունության քարտեզի կազմում՝ առավել խոցելի շենքերի հայտնաբերման և դրանց ուղղությամբ սեյսմակայունության բարձրացման աշխատանքներ իրականացնելու նպատակով** Երևանի բնակարանային ֆոնդը պետք է պատրաստ լինի բնական աղետներին, որոնք մեր աշխարհագրական տարածաշրջանում հազվադեպ չեն: Երևանում հսկայական գործ կա անելու այս ուղղությամբ: Սա առաջնահերթություն է Ապահով Երևան կառուցելու ճանապարհին	Յուրաքանչյուր տարի՝ բնակիչների թվի 10%-ի չափով	✓ Բազմաբնակարան շենքերի բնակիչներ
1.3.	**Գոյություն ունեցող ապաստարանների վերականգնում, վերանորոգում**	Անհապաղ	✓ Երևանի յուրաքանչյուր բնակիչ

	Արդեն իսկ կառուցված շենքերի բնակչության հաշվով նոր ապաստարանների կառուցում **Բազմաբնակարան շենքերի բակերի հասանելիության բարձրացում՝ արտակարգ իրավիճակներում բնակիչների անխոչընդոտ տարհանումը ապահովելու համար** **Քաղաքաշինական նորմերի վերանայում՝ նոր կառուցվող բազմաբնակարան շենքերի նկուղային հարկերում ապաստարանների կառուցման պարտադիր սկզբունք** **ՀՀ ԱԻՆ համագործակցությամբ ապաստարաններում պարենային մատակարարումների սխեմայի մշակում և ներդրում** Երևանը պետք է պատրաստ լինի ապահովել իր բնակիչների անվտանգությունն արտակարգ իրավիճակներում: Երևանի յուրաքանչյուր բնակիչ պետք է իմանա իր ապաստարանի տեղը և պետք է հնարավորություն ունենա նվազագույն ժամանակահատվածում այնտեղ հասնել: Երևանում ապաստարանները պետք է համապատասխանեն բնակիչների թվին:		
1.4.	**Բոլոր շենքերի բակերում գիշերային անընդհատ լուսավորության ապահովում** «Երևանը չի քնում»: Բակային տարածքների և սեփական տների թաղամասերում անընդհատ գիշերային լուսավորության ապահովումը բնակիչների ապահովության և անվտանգության բարձրացման կարևոր նախապայման է: Արևային էներգիայի ստացման և էներգախնայող համակարգերի կիրառման շնորհիվ անընդհատ լուսավորության ապահովումը լրացուցիչ բեռ չի լինի Երևանի բյուջեի վրա:	3 տարի	✓ Երևանի յուրաքանչյուր բնակիչ
1.5.	**Բոլոր հնարավոր փողոցներում մայթերի ընդլայնում, նոր մայթերի կառուցում՝ առնվազն 1,8 մ լայնությամբ**	4 տարի	✓ Հետիոտներ ✓ Վարորդներ ✓ Մայրեր

	Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ խաչմերուկներում շրջադարձի անկյունը լայնացնելու դեպքում էականորեն նվազում են վրաերթների և ՃՏՊ-ների դեպքերը, քանի որ մեծանում է վարորդների տեսադաշտը: Բոլոր նոր կառուցվող խաչմերուկներում և արդեն իսկ գոյություն ունեցող խաչմերուկներում նման մոտեցման կիրառումը էականորեն կհեշտացնի մեքենա վարելը և կբարձրացնի հետիոտն տեղաշարժվողների անվտանգությունը: Երևանում մայթերը պետք է լինեն լայն և համապատասխան քաղաքաշինական նվազագույն նորմերին: Մայթերը վերադարձվելու են մայթերով տեղաշարժվող մեր քաղաքացիներին:		✓ Սպորտի սիրահարներ ✓ Մանուկներ ✓ Դպրոցականներ ✓ Տարեցներ, թոշակառուներ ✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ ✓ Զբոսաշրջիկներ ✓ Մայրաքաղաքի հյուրեր
1.6.	**Թափառող կենդանիների խնդրի լուծում՝ կացարանի և կլինիկայի կառուցում, հանրային վայրերում թափառող կենդանիների բացառում:** Քաղաքային իշխանության անմիջական պարտավորությունն է գտնել այն հավասարակշռության կետը, երբ մեր չորսոտանի փոքր բարեկամները համատեղ գոյակցում են երևանցիների հետ՝ առանց նրանց կյանքին վտանգ ներկայացնելու: Երևանում թափառող կենդանիների խնդիրը լուծելի է, ինչքան էլ որ այն անհնարին թվա:	3 տարի	✓ Երևանի անխտիր յուրաքանչյուր բնակիչ ✓ Զբոսաշրջիկներ ✓ Մայրաքաղաքի հյուրեր
1.7.	**Փողոցներում ապօրինի արհեստական անհարթությունների վերացում, դրանց կառուցման ժամանակ սահմանված նորմերի խստագույն պահպանում:** **Երթևեկության առավել խնդրահարույց հատվածներում «խելացի խոչընդոտների» կառուցում, որոնք, կախված մեքենայի արագությունից, ամբողջովին հարթ դիրքից վերածվում են արհեստական անհարթության՝ մեքենայի արագ ընթացքը կանխելու նպատակով:** Ճանապարհներին կառուցված արհեստական խոչընդոտները պետք է դժբախտ պատահարներ կանխարգելեն, այլ ոչ թե վարորդների մեքենաները վնասեն: Անկախ փողոցի առաջնային կամ երկրորդական լինելուց՝ արգելվելու և վերացվելու են երթևեկելի մասում ապօրինի և քաղաքաշինական նորմերին չհամապատասխանող արհեստական	3 տարի	✓ Վարորդներ ✓ Շենքերի բնակիչներ ✓ Մասնավոր տների բնակիչներ ✓ Հետիոտներ

	անհարթությունների կառուցումը: Բնակիչների մի խմբի անվտանգությունը չպետք է մյուս շահառուների սեփականությունը վնասելու հաշվին լինի: Համաշխարհային պրակտիկայում լայնորեն կիրառվող «Խելացի խոչընդոտների» կառուցումը հնարավորություն կտա ցածր արագությամբ երթևեկող մեքենաներին առանց խոչընդոտի անցնել տվյալ հատվածով, իսկ արագ երթևեկող մեքենաների դեպքում՝ նախապես գրանցելով արագությունը՝ արհեստական խոչընդոտը ավտոմատ կբարձրանա՝ ստիպելով արագ երթևեկող վարորդին նվազեցնել արագությունը		
1.8.	**Կամուրջների ներքևի հատվածների ցանցապատում՝ տվյալ հատվածում դժբախտ դեպքերը կանխելու նպատակով** Եթե կամուրջների ցանցապատումով կփրկենք թեկուզ մեկ կյանք, ապա այս ուղղությամբ կատարված ցանկացած աշխատանք արդարացված է և նպատակային: Ցանցապատումը պետք է իրականացվի՝ չխաթարելով Երևանի գլխավոր երեք կամուրջների ճարտարապետական տեսքը:	2 տարի	✓ Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մարդիկ
1.9.	**Չկարգավորվող հետիոտնային անցումների ապահովում լուսացույցներով (այդ թվում՝ ձայնային ազդանշաններով հագեցած):**	3 տարի	✓ Երևանի յուրաքանչյուր բնակիչ

2. ԱՌՈՂՋ ԵՐԵՎԱՆ

	Ծրագիրը, նկարագրությունը	Ժամկետ	Շահառուներ
2.1.	**Պոլիկլինիկաների աշխատանքային ժամի երկարաձգում մինչև 20:00** **Առողջապահության ծառայությունների շարունակական թվայնացում** Քաղաքային պոլիկլինիկաները բնակիչների առողջության ապահովման առաջնային և կարևոր օղակներն են: Նրանց կողմից մատուցվող ծառայությունների առկա իրավիճակը գոհացուցիչ չէ: Անհրաժեշտ են համակարգային փոփոխություններ՝ առաջին հերթիրն բարձրացնելու կառավարման արդյունավետությունն ու ապահովելու բնակիչների համար այդ հաստատությունների առավել բարձր հասանելիությունը: Անհրաժեշտը է ներդնել բնակիչների սպասարկման թվային լուծումներ, որոնք կպարզեցնեն և կհեշտացնեն շփումը պոլիկլինիկաների հետ: Պոլիկլինիկաների աշխատանքային ժամը կերկարաձգվի մինչև 20:00	2 տարի	✓ Շենքերի բնակիչներ ✓ Մասնավոր տների բնակիչներ ✓ Մանուկներ ✓ Դպրոցականներ ✓ Երիտասարդ ընտանիքներ ✓ Տարեցներ, թոշակառուներ ✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ
2.2.	**20 հանրային անվճար բաց լողավազանների կառուցում** **Բացօթյա սպորտի ու առողջ ապրելակերպի հանրայնացում, որակյալ և դիմացկուն մարզահրապարակների կառուցում** Առողջ ապրելակերպը՝ որպես մտածելակերպ: Քաղաքային միջավայրում առողջ կենսակերպ վարելը անհրաժեշտություն է: Եվ նման ապրելակերպը պետք է հանրայնացվի և խրախուսվի: Բացի բակային և թաղամասային մարզահրապարակների կառուցումից՝ քաղաքային միկրոկլիմայի վրա դրական ազդեցություն են թողնում նաև հանրային բաց լողավազանները, որոնք քաղաքի օդի խոնավացման կարևոր օղակներ են:	Յուրաքանչյուր տարի 5 լողավազան Մարզահրապարակների կառուցումը՝ 4 տարում	✓ Առողջ ապրելակերպի սիրահարներ ✓ Շենքերի բնակիչներ ✓ Մասնավոր տների բնակիչներ ✓ Մանուկներ ✓ Դպրոցականներ ✓ Սահմանափակ կարողություններ ունեցողներ ✓ Զբոսաշրջիկներ
2.3.	**Կանգառներում, հանրային տարածքներում օդի մաքրման կայանների տեղադրում**	Յուրաքանչյուր տարի կանգառների 10%	✓ Հետիոտներ ✓ Շենքերի բնակիչներ ✓ Մասնավոր տների բնակիչներ

	Հանրային տրանսպորտի կանգառների տարածքները օդի աղտոտվածության առավել բարձր մակարդակ ունեցող հատվածներից են, որտեղ ամեն օր տասնյակ հազարավոր բնակիչներ են գտնվում: Մարդկային մեծ կուտակումներ ունեցող նման հանրային վայրերում օդի մաքրման կայանների տեղադրումը էականորեն կբարելավի օդի որակը և կանգառներում սպասող մարդկանց զերծ կպահի կեղտոտ օդի վնասակար ազդեցությունից:		✓ Ուսանողներ ✓ Երիտասարդներ ✓ Տարեցներ, թոշակառուներ ✓ Զբոսաշրջիկներ ✓ Մայրաքաղաքի հյուրեր
2.4.	**Երևան մտնող խմելու ջրի որակի բարձրացում՝ մաքրող կայանների տեղադրում** Երևանում անհնար է խոսել առողջության պահպանման մասին, եթե մեր ծորակներին մաքուր ջուրի չի հոսում: Խմելի ջրի կառավարումը առաջնային և որևէ հետաձգում չհանդուրժող հիմնախնդիր է, որը հրատապ լուծման կարիք ունի: Երևան մտնող ջրի ծավալների կորուստը անընդունելի է: Նվազեցնելով ջրի կորուստը կբարձրանա մաքուր բնական աղբյուրներից դեպի Երևան եկող ջրի ծավալը: Ժամանակակից ջրի մաքրման կայաններ ունենալը անհրաժեշտություն է: Առողջ Երևանում՝ մաքուր ջուր:	2 տարի	✓ Երևանի անխտիր բոլոր բնակիչները
2.5.	**Աղբահանության ամբողջական համակարգ (սկսած աղբահավաքումից ու աղբի տեսակավորումից, վերջացրած դրա պահեստավորմամբ և այլընտրանքային էներգիայի ստացումով):** **Աղբի վերամշակման գործարան Նուբարաշենում** **Կոշտ շինարարական թափոնների աղբավայրի հիմնում, կոշտ շինարարական աղբի տեղափոխման լիցենզավորում** Աղբի տեղափոխումը Երևանից դեպի աղբավայր բավարար չէ համարելու համար, որ քաղաքում իրականացվում է ժամանակակից պահանջներին համապատասխան աղբահանություն: Նույնիսկ նոր աղբավայրի կառուցումը բավարար չէ համարելու համար, որ աղբավայրն այլևս վնասակար չէ մարդկանց առողջության և շրջակա միջավայրի համար: Անհրաժեշտ է գործողությունների փակ շղթա, որը թույլ կտա ոչ միայն պահեստավորել աղբը, այլև դրանից ստանալ էներգիա և այլ պիտանի մնացորդներ՝ ինչպես ընդունված է քաղաքակիրթ երկրներում:	3 տարի	✓ Երևանի անխտիր բոլոր բնակիչները

	Երևանի աճող շինարարական տեմպերին զուգահեռ աջում է նաև կոշտ կենցաղային և շինարարական աղբի պահեստավորման հարցը: Անթույլատրելի է այլևս շինարարական աղբի անկանոն, ապօրինի և խիստ վտանգավոր աղբահանումը կամայական վայրերում: Այս գործունեությունը պետք է լիցենզավորվի և իրականացվի բացառապես իրավական վերահսկողության սահմաններում՝ հատուկ աղբավայրում:		
2.6.	**Հեծանվային ուղիների կառուցում և սահմանազատում, հեծանվային մարաթոնների կազմակերպում՝ խրախուսական բոնուսներով** Քաղաքային պայմաններում հեծանվային տեղաշարժը առողջարար է, նորաձև և հեռանկարային: Հակառակ տարածված կարծրատիպի՝ Երևանը կարող է ունենալ հենածվային տեղաշարժի համար նախատեսված ճանապարհային ցանց: Հեծանվային սպորտի և տեղաշարժի հանրայնացմանն և խրախուսմանն ուղղված միջոցառումները քաղաքային սպորտ-մշակութային կյանքի անբաժան մասն են հանդիսանալու:	3 տարի	✓ Հետիոտներ ✓ Երիտասարդներ ✓ Մեծահասակներ, տարեցներ ✓ Առողջ ապրելակերպի սիրահարներ ✓ Դպրոցականներ
2.7.	**Հետիոտնային տեղաշարժի համար նախատեսված տարածքների նախագծում** Երևանը միայն ավտոմեքենաներով տեղաշարժի համար չէ: Քաղաքային միջավայրը պետք է հարմար լինի հետիոտն տեղաշարժի համար: Երևանի որոշ բանուկ հատվածներ կվերակառուցվեն այնպես, որտեղ իրականացվելու է բացառապես հետիոտնային տեղաշարժ՝ միաժամանակ չխոչընդոտելով ավտոմեքենաների երթևեկը: Այո, դա հնարավոր է:	4 տարի	✓ Հետիոտներ ✓ Առողջ ապրելակերպի սիրահարներ ✓ Դպրոցականներ ✓ Երիտասարդներ ✓ Տարեցներ, թոշակառուներ ✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ
2.8.	**Բոլոր թաղամասերում ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի և այլ մարզաձևերը (ըստ ընտրության) մանկապատանեկան թիմերի ստեղծում և առաջնությունների անցկացում**	3 տարի	✓ Առողջ ապրելակերպի սիրահարներ ✓ Շենքերի բնակիչներ ✓ Մասնավոր տների բնակիչներ ✓ Մանուկներ ✓ Դպրոցականներ ✓ Երիտասարդներ

			✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ ✓ Զբոսաշրջիկներ

3. ԽԵԼԱՑԻ ԵՐԵՎԱՆ

	Ծրագիրը, նկարագրությունը	Ժամկետ	Շահառուներ
3.1.	**Կառավարվող լուսացույցներ՝ խցանումները կարգավորելու նպատակով** Երևանում տրանսպորտային հոսքերը չեն կառավարվում: Լուսացույցների ժամանակային ինտերվալները հաշվարկված են մոտավոր՝ առանց նոր իրականությունները հաշվի առնելու: Հիմնվելով Կառավարման կենտրոնի տվյալների հիման վրա՝ ներդրվելու է ինքնակառավարվող) լուսացույցներ մեծ ցանց, որը հնարավորություն է տալու կարգավորել լուցացույցների ազդանշանների տևողությունը՝ հաշվի առնելով մեքենաների թիվը և խցանումների առաջացման հնարավորությունը:	2.5 տարի	✓ Երևանի անխտիր յուրաքանչյուր բնակիչ ✓ Զբոսաշրջիկներ ✓ Մայրաքաղաքի հյուրեր
3.2.	**Կառավարման թվային կենտրոնի ստեղծում** 21-րդ դարը ինֆորմացիոն տեխնոլոգիաների դար է, և անհնար է պատկերացնելը ժամանակակից քաղաքի կառավարումը առանց կառավարման թվային կենտրոն ունենալու, առանց տվյալներ հավաքելու և որոշումներ կայացնելու՝ առանց հենվելու տվյալների վերլուծության վրա: Կառավարման կենտրոնի հիմնումը որակապես նոր մակարդակի կբարձրացնի որոշումների կայացման և պլանավորման գործառույթները: Ավտոմեքենաների թվի հսկում, ինքնակառավարվող լուսացույցներ, տրանսպորտային չվացուցակների և ժամանակացույցների կառավարում, սպասարկման ամենատարբեր ոլորտների աշխատանքների թվայնացում և այլն: Սրանք միայն շատ փոքր մասն են, ինչ իրականացնելու է Կառավարման թվային կենտրոնը: Ավելին, աշխատանքների թվայնացումը հնարավորություն կտա էականորեն օպտիմալացնել համայնքային բյուջեի ծախսերը:	1.5 տարի	✓ Վարորդներ ✓ Հետիոտներ
3.3.	**Հանրային տրանսպորտի նավիգացիոն համակարգի ներդրում**	2 տարի	✓ Շենքերի բնակիչներ ✓ Մասնավոր տների բնակիչներ

	Հանրային տրանսպորտի կանգառներում տրանսպորտային շարժի և սպասելաժամանակի թվատախտակների տեղադրում Ժամանակակից քաղաքներում տրանսպորտի տեղաշարժի և ուղեգծերի վերաբերյալ թվային տեղեկատվության հասանելիությունը անհրաժեշտություն է: Հիմնվելով Կառավարման թվային կենտրոնի տվյալների վրա՝ յուրաքանչյուրը հնարավորություն կունենա տեղում տեսնել իրեն անհրաժեշտ հանրային տրանսպորտի ժամանումը, ինչպես նաև ստանալ տեղեկություն, թե որ տրանսպորտը նստել քաղաքի մի կետից մյուսը հասնելու համար		✓ Երիտասարդներ ✓ Ուսանողներ ✓ Դպրոցականներ ✓ Երիտասարդ ընտանիքներ ✓ Տարեցներ, թոշակառուներ ✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ ✓ Զբոսաշրջիկներ ✓ Մայրաքաղաքի հյուրեր
3.4.	**Անվճար Wi-Fi հանրային վայրերում** Համագործակցելով օպերատորների հետ՝ հանրային վայրերում հասանելի կլինի անվճար Wi-Fi ինտերնետ կապ:	1.5 տարի	✓ Երիտասարդներ ✓ Ուսանողներ ✓ Դպրոցականներ ✓ Երիտասարդ ընտանիքներ ✓ Տարեցներ, թոշակառուներ ✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ ✓ Զբոսաշրջիկներ ✓ Մայրաքաղաքի հյուրեր
3.5.	**Երևանի միասնական թվային հավելված** Երևանը ունենալու է միասնական մոբայլ հավելված, որտեղ երևանցին և Երևանով հետաքրքրվողը ոչ միայն հնարավորություն է ունենալու ստանալ քաղաքին վերաբերող տարատեսակ ինֆորմացիա, այլև ստանալ թվային ծառայություններ, կատարել վճարումներ, ուղիղ հաղորդակցվել քաղաքապետարանի մեկ պատուհանի աշխատակիցների հետ, ստանալ և ուղարկել պաշտոնական նամակներ և այլն:	2.5 տարի	✓ Հետիոտներ ✓ Վարորդներ ✓ Առողջ ապրելակերպի սիրահարներ ✓ Շենքերի բնակիչներ ✓ Մասնավոր տների բնակիչներ ✓ Դպրոցականներ ✓ Երիտասարդներ / ուսանողներ ✓ Երիտասարդ ընտանիքներ

			✓ Տարեցներ / թոշակառուներ ✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ ✓ Կանայք ✓ Կենդանասերներ ✓ Մշակութասերներ ✓ Զբոսաշրջիկներ ✓ Մայրաքաղաքի հյուրեր
3.6.	**Հանրային տրանսպորտի առցանց վճարման համակարգի ներդրում** Երևանը ունենալու է առցանց վճարային միասնական և գործող համակարգ: Տեղային և եզակի օրինակները բավարար չեն: Այս երկար սպասված բարեփոխումը իրականություն է դառնալու՝ ապահովելով նաև նախապես վճարելու ու հետագայում օգտվելու տարբեր ճկուն հնարավորություններով:	2 տարի	✓ Շենքերի բնակիչներ ✓ Մասնավոր տների բնակիչներ ✓ Ուսանողներ ✓ Դպրոցականներ ✓ Երիտասարդ ընտանիքներ ✓ Տարեցներ, թոշակառուներ ✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ ✓ Զբոսաշրջիկներ ✓ Մայրաքաղաքի հյուրեր

4. ԿԱՆԱՉ ԵՐԵՎԱՆ

	Ծրագիրը, նկարագրությունը	Ժամկետ	Շահառուներ
4.1.	**Վարչական շրջաններում հանրային այգիների հիմնանորոգում և վերակառուցում** **Անտառապատ և այգեպատ հատվածների վերականգնում և նոր նպատակային այգիների հիմնում՝ Դալմա, Նորք, Մալաթիա-Սեբաստիա** Երևանին են վերադարձվելու քաղաքի թոքերը՝ աստիճանաբար և հաստատուն քայլերով: Օդի աղտոտվածության պատճառներից մեկը հենց փոշին է, որի դեմ պայքարի ամենաարդյունավետ միջոցներից մեկը խիտ կանաչապատումն է: Երևանում պետք է վերականգնվեն 90-ականներին հատված անտառները՝ ապահովելով թարմ և մաքուր օդ ողջ քաղաքի համար:	4 տարի	✓ Երևանի անխտիր յուրաքանչյուր բնակիչ ✓ Զբոսաշրջիկներ ✓ Մայրաքաղաքի հյուրեր
4.2.	**Արքաների պատմական պուրակի հիմնում** Երևանը պետք է ունենա այգի, որն խորհրդանշում է մեր պետականությունն ու դրա պատմությունը, պետք է նվիրված լինի պատմության ընթացքում մեր պետականության խորհրդանիշերին՝ արքաներին և թագավորներին: Իսկ թե ինչպիսի արտաքին տեսք և ձևավորում կունենա պուրակը, որոշելու են Երևանցիները	2 տարի	✓ Երևանի անխտիր յուրաքանչյուր բնակիչ ✓ Զբոսաշրջիկներ ✓ Մայրաքաղաքի հյուրեր
4.3.	**Ճանապարհային մեծ հանգույցներում, խոշոր խաչմերուկներում ջրային ավազանների կառուցում** (շատրվաններով՝ միկրոկլիմայի փոփոխության նպատակով): Ջրային ավազանների կառուցումը ծանրաբեռնված տրանսպորտային հանգույցներում շեշտակի բարելավում է հարակից տարածքի միկրոկլիման:	3 տարի	✓ Հետիոտներ ✓ Վարորդներ ✓ Հարակից շենքերի բնակիչներ ✓ Զբոսաշրջիկներ ✓ Մայրաքաղաքի հյուրեր

4.4.	**Գերեզմանատներում աղբահանության, ջրի հասանելիության ապահովման և կանաչապատման աշխատանքների իրականացում** Գերեզմանատները Երևանի վարչական տարածքի նկատելի մաս են կազմում այլևս: Այսօր դրանք կանաչապատումից զուրկ տարածքներ են, իսկ գերեզմանատների հողային շերտը իր հերթին քամու հետ օդում փոշու ավելացման աղբյուր է դառնում: Գերեզմանատներում պետք է հասանելի լինի խմելու և ոռոգման ջրային ցանցը, ինչպես նաև իրականացվի ագրեսիվ կանաչապատում	Սկսած 1-ին օրվանից	✓ Երևանի անխտիր յուրաքանչյուր բնակիչ
4.5.	**Քաղաքային (urban) անտառների հիմնում Երևանի պարագծով** Երևանը կարիք ունի անտառապատ շերտի, որը կկանխարգելի փոշու մուտքը քաղաք: Օդի աղտոտման դեմ այս պայքարը երկարաժամկետ լուծում է ապահովում ոչ միայն այսօր, այլև ապագայում:	4.5 տարի	✓ Երևանի անխտիր յուրաքանչյուր բնակիչ
4.6.	**Կանաչապատման ամբողջական հայեցակարգի մշակում և ներդրում** **Կանաչապատման սխեմայի մշակում և հանրայնացում** Երևանը միասնական և համալիր կանաչապատման հայեցակարգ չունի: Նման հայեցակարգը անհրաժեշտություն է նաև շենք-շինությունների ուղղահայաց կանաչապատման ուղեցույցներ, տանիքների կանաչապատման օրինակելի ընթացակարգեր և մոտեցումներ ունենալու համար: Անկանոն կանաչապատումը կփոխարինվի Երևանի բնակլիմայական պայմաններին հարմարեցված և հեռանկարային ծառատեսակների և թփերի տեսակարար կշռի ավելացմամբ:	1.5 տարի	✓ Երևանի անխտիր յուրաքանչյուր բնակիչ
4.7.	**«Կանաչ կրթության» առաջխաղացում** Մարդկանց անհրաժեշտ է «կանաչ կրթություն» տալ դեռ վաղ մանկական տարիքից: Մաքուր է ոչ թե այնտեղ, որտեղ անդադար մաքրություն են անում, այլև այնտեղ, որտեղ չեն կեղտոտում: Կներդրվեն նախադպրոցական և դպրոցական հիմնավոր ծրագրեր՝ պետական	Մշտապես	✓ Երեխաներ ✓ Դպրոցականներ ✓ Ուսանողներ

	լիազոր մարմնի և քաղաքացիական հասարակության կառույցների ակտիվ համագործակցության արդյունքում:		
4.8.	**Բակային տարածքների շարունակական ազատում ապօրինի կառույցներից և հանրային տարածքների հիմնում** Բակային տարածքների ազատագրումը ապօրինի կառուցապատումներից այլընտրանք չունի: Այս աշխատանքները շարունակվելու են և երևանցիներին են վերադարձվելու իրենց բակերը:	3 տարի	✓ Մայրեր ✓ Առողջ ապրելակերպի սիրահարներ ✓ Շենքերի բնակիչներ ✓ Երեխաներ ✓ Դպրոցականներ ✓ Տարեցներ / թոշակառուներ ✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ
4.9.	**Անձրևաջրերի հավաքման և դրանց հետագա օգտագործում** **Փողոցային ջրահեռացման համակարգերի արդիականացում և թողունակության մեծացում՝ անձևրաջրերի հետագա օգտագործման համակարգին ինտեգրում** Անձրևաջրերը անփոխարինելի ռեսուրս են քաղաքի ջրային կարիքները լուծելու համար: Երևանը կունենա անձրևաջրերի հավաքման և դրանց հետագա օգտագործման համակարգ, որը կներառի ոչ միայն անձրևաջրերի հեռացումը, այլև դրանց պահեստավորումն ու բաշխումը:	4.5 տարի	✓ Երևանի անխտիր յուրաքանչյուր բնակիչ
4.10.	**Կեղտաջրերի մաքրման կայանի կառուցում, վերակառուցում** Երևանը ունենալու է կեղտաջրերի մաքրման գործող կայան, այլևս ոչ մի արդարացում տարատեսակն խոչընդոտների առկայության վերաբերյալ: Սա երկարաժամկետ ներդրում է երևանցու կյանքի որակի բարելավման գործում:	4 տարի	✓ Մասնավոր տների բնակիչներ ✓ Շենքերի բնակիչներ
4.11.	**Նուբարաշենի գործող աղբավայրի բնապահպանական վնասների ուսումնասիրություն և դրանց հետևանքների երկարաժամկետ մեղմում** Նուբարաշենի աղբավայրը Երևանի բաց վերքն է: Անհնար է բուժել այդ վերքը՝ առանց հասկանալու, թե ինչ հետևանքներ է այն թողնում Երևանի	1) Մինչև 2025 թվականը աղբավայրի բնապահպանական վնասների ամբողջական և համալիր ուսումնասիրություն	✓ Երևանի անխտիր յուրաքանչյուր բնակիչ

	Էկոհամակարգի և երևանցու առողջության վրա: Մենք պատրասն ենք զբաղվել այս ծանրագույն խնդրով	2) Մինչև 2026 թվականը իրականացվող գործողությունների ռազմավարության մշակում 3) Սկսած 2025 թվականից՝ շարունակական միջոցառումների իրականացում	
4.12.	**Սեփական տների բնակելի հատվածներում կանաչապատման խրախուսում** Երևանում անհրաժեշտ է խրախուսել սեփական բնակելի հատվածներում կանաչապատումը, տրամադրել օժանդակություն, որպեսզի ստեղծված կանաչ հատվածները մաս կազմեն Երևանի կանաչապատման ամբողջական համակարգին	Անհապաղ	✓ Մասնավոր տների բնակիչներ ✓ Երևանի անխտիր յուրաքանչյուր բնակիչ
4.13.	**Բետոնե պատնեշների փոխարինում կանաչապատ տարածքով բոլոր հնարավոր և անվտանգ հատվածներում** Երևանում հնարավոր է ճանապարհային բետոնե արգելապատնեշները փոխարինել հատուկ կառուցվածքներով, որոնք հնարավորություն են տալիս արգելապատնեշների հատվածում ունենալ գեղեցիկ և խիտ կանաչապատում: Բանուկ ճանապարհահատվածներում ծառապատ հատվածների առավելությունը զգացել են բոլոր վարորդները:	3 տարի	✓ Վարորդներ ✓ Հարակից հատվածների բնակիչներ ✓ Մայրաքաղաքի հյուրեր

5. ՀԱՍԱՆԵԼԻ ԵՐԵՎԱՆ

	Ծրագիրը, նկարագրությունը	Ժամկետ	Շահառուներ
5.1.	**Հաշմանդամություն ունեցող մարդկանց անվտանգ և մատչելի տեղաշարժի ապահովում հանրային տարածքներում և կառույցներում** (ներառյալ թեքահարթակներ, կանչով լուսացույցներ, ձայնային ազդանշաններ, հատուկ վերելակներ և այլն) Նոր կառուցվող հանրային տարածքներն ու շենքերը պետք է ունենան իրական հասանելիություն հաշմանդամություն ունեցող մարդկանց համար, ինչպես նաև մանկասայլակով մայրերի համար: Որևէ շինթույլտվություն չի ստորագրվելու, եթե չի ապահովվել հաշմանդամություն ունեցող մարդկանց անվտանգ և մատչելի տեղաշարժը: Իսկ արդեն իսկ կառուցված հանրային տարածքները շարունակաբար հարմարեցվելու են նման կարիքներին:	2.5 տարի	✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ ✓ Տարեցներ ✓ Զբոսաշրջիկներ ✓ Մայրաքաղաքի հյուրեր ✓ Մանկասայլակով մայրեր
5.2.	**Տրանսպորտի սպասման առավելագույն ժամանակը՝ 8 րոպե** Երևանում հանրային տրանսպորտի երթուղիներն ու չվացուցակները արմատական բարեփոխման կարիք ունեն, որից անմիջապես հետո Էականորեն կբարելավի տրանսպորտի աշխատանքը: Կառավարման թվային կենտրոնուն ստացված տվյալների վերլուծությունով և մոդելավորմամբ՝ կանգառներում բնակիչը կսպասի իրեն անհրաժեշտ տրանսպորտին առավելագույնը 8 րոպե: **Կանգառների հեռավորությունը հանրային ու բնակելի շենքերից, մասնավոր տներից՝ առավելագույնը 600 մ** Երևանում տրանսպորտային կանգառները կտեղադրվեն այնպես, որպեսզի դրանք ընկած լինեն յուրաքանչյուր բնակելի շենքից կամ տանից առավելագույնը 600 մ հեռավորության վրա:	1) 1 տարի 2) Յուրաքանչյուր տարի կանգառների առնվազն 20%-ը	✓ Հետիոտներ ✓ Շենքերի բնակիչներ ✓ Մասնավոր տների բնակիչներ ✓ Ուսանողներ ✓ Երիտասարդներ ✓ Դպրոցականներ ✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ ✓ Տարեցներ, թոշակառուներ ✓ Զբոսաշրջիկներ ✓ Մայրաքաղաքի հյուրեր
5.3.	**Հանրային տրանսպորտի աշխատանքը 06:30 - 01:00** Առավոտյան շուտ աշխատանքի գնացող մեր համաքաղաքացիները պետք է հնարավորություն ունենան հանրային տրանսպորտով հասնելու	1 տարի	✓ Հետիոտներ ✓ Շենքերի բնակիչներ

	իրենց աշխատավայր: Իսկ ուշ գիշերին մեր համաքաղաքացիներն ու հյուրերը պետք է հնարավորություն ունենան հանրային տրանսպորտով տեղաշարժվել Երևանով:		✓ Մասնավոր տների բնակիչներ ✓ Ուսանողներ ✓ Երիտասարդներ ✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ ✓ Տարեցներ, թոշակառուներ ✓ Մշակութասերներ ✓ Զբոսաշրջիկներ ✓ Մայրաքաղաքի հյուրեր
5.4.	**«Քաղաքացու օգնական» ինստիտուտի ներդրում** Երևանի բնակիչն ունենալու է իր օգնականը տարբեր պետական և մասնավոր հատվածի հետ կապված շփումներում իրեն աջակցելու համար:	4 տարի	✓ Երևանի անխտիր բոլոր բնակիչները ✓ Զբոսաշրջիկներ ✓ Մայրաքաղաքի հյուրեր
5.5.	**Հանրային տրանսպորտ՝ հարմարեցված և մատչելի հաշմանդամություն ունեցող մարդկանց համար** **Հասանելի մետրո բոլորի համար** Երևանի որևէ բնակիչ կամ հյուր չպետք է որևէ դժվարություն ունենա հանրային տրանսպորտից օգտվելու հարցում, հանրային տրանսպորտը հարմարեցված է լինելու հաշմանդամություն ունեցողներին	3.5 տարի	✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ ✓ Տարեցներ, թոշակառուներ ✓ Զբոսաշրջիկներ ✓ Մայրաքաղաքի հյուրեր
5.6.	**Զվարթնոց օդանավակայանից մոնոռելսի կառուցում դեպի մետրոյի Չարբախ կայարան** Երևան ժամանող մեր հայրենակիցների և հյուրերի համար պետք է մատչելի տեղափոխում ապահովի դեպի Երևան: Զվարթնոց օդանավակայանից դեպի մետրոյի Չարբախ կայարան մոնոռելսի կառուցումը կարևորագույն նշանակություն ունի Երևանի հասանելիությունը բարձրացնելու համար:	4 տարի	✓ Հայաստան ժամանող և Հայաստանից մեկնող բոլոր մարդիկ ✓ Զբոսաշրջիկներ ✓ Մայրաքաղաքի հյուրեր
5.7.	**Երիտասարդների և տարեցների համար ժամանցի պայմանների ստեղծում, ամենամյա համալիր կրթական և զվարճանքի ծրագրերի իրականացում**	Մշտապես	✓ Երեխաներ ✓ Դպրոցականներ ✓ Ուսանողներ ✓ Երիտասարդներ

	Երևանցիների ժամանցի կազմակերպման գործում համայնքային իշխանություններն առանցքային դեր ունեն: Իսկ կրթական ծրագրերի անցկացումը՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցությամբ՝ ուղղակի պարտականություն:		✓ Տարեցներ / թոշակառուներ ✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ ✓ Մշակութասերներ ✓ Զբոսաշրջիկներ ✓ Մայրաքաղաքի հյուրեր
5.8.	**Child-friendly city նախաձեռնության ներառում քաղաքային պլանավորման մեջ** Երևանում նոր կառուցվող և գոյություն ունեցող ենթակառուցվածքները (մայթեր, խաղահրապարակներ, մանկապարտեզներ և այլն) պետք է հարմար, հասանելի և անվտանգ լինեն երեխաների համար: Երևանը միանալու է համաշխարհային այս նախաձեռնությանը՝ մեր քաղաքը առավել մոտեցնելով երեխաներին:	2 տարի	✓ Մայրեր ✓ Երեխաներ ✓ Դպրոցականներ ✓ Երիտասարդ ընտանիքներ ✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ ✓ Հաշմանդամություն ունեցող երեխաներ ✓ Հետիոտներ ✓ Շենքերի բնակիչներ ✓ Մասնավոր տների բնակիչներ
5.9.	**Նոր, էկոլոգիապես անվտանգ և հաշմանդամություն ունեցող երեխաների համար մատչելի խաղահրապարակների կառուցում** Երևանում կառուցվող յուրաքանչյուր խաղահրապարակ պետք է լինի անվտանգ, չունենա վնասարար ազդեցություն երեխաների առողջության վրա, և ամենակարևորը, լինի հասանելի հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար:	Անհապաղ	✓ Մայրեր ✓ Երեխաներ ✓ Դպրոցականներ ✓ Երիտասարդ ընտանիքներ ✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ ✓ Հաշմանդամություն ունեցող երեխաներ ✓ Հետիոտներ ✓ Շենքերի բնակիչներ ✓ Մասնավոր տների բնակիչներ
5.10.	**Բակային զրուցարանների կառուցում (բաց և փակ)**	4 տարվա ընթացում բակերի 90%	✓ Շենքերի բնակիչներ

	Բազմաբնակարան շենքերի բնակիչների բացօթյա ժամանցն ու սոցիալականացումը ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել նվազագույն պայմաններ հենց տեղում, շենքերի բակերում: Երևանի բակերի բարեկարգմանը զուգընթաց կտեղադրվեն և կկառուցվեն բակային զրուցարաններ՝ բաց և փակ:		✓ Մասնավոր տների բնակիչներ ✓ Երեխաներ ✓ Դպրոցականներ ✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ ✓ Երիտասարդներ ✓ Տարեցներ, թոշակառուներ
5.11.	**Խոցելի խմբերի համար բնակարանից աղբի հավաքման ծառայության ներդրում**	2 տարի	✓ Տարեցներ, թոշակառուներ ✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ ✓ Շենքերի բնակիչներ ✓ Մասնավոր տների բնակիչներ
5.12.	**Ընտանի կենդանիների (շների) զբոսանքի վայրերի առանձնացում, կահավորում** Զբոսանքը կարևոր նախապայման է առողջ և մարդամոտ ընտանի կենդանիներ ունենալու համար	3 տարվա ընթացքում առնվազն 3 վայրի առանձնացում	✓ Շենքերի բնակիչներ ✓ Մասնավոր տների բնակիչներ ✓ Կենդանասերներ

6. ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԵՐԵՎԱՆ

	Ծրագիրը, նկարագրությունը	Ժամկետ	Շահառուներ
6.1.	**Երևանի երկարաժամկետ զարգացման պլանի մշակում և հաստատում**, շինարարության իրականացում բացառապես գլխավոր հատակագծի սահմաններում Երևանի զարգացման հեռանկարներն ու կարգավորումները պետք է հասանելի լինեն բոլորին: Երևանցիները, գործարար հատվածը, կառուցապատողներն ու քաղաքային պլանավորողները պետք է տեղյակ լինեն, թե ինչպիսին է լինելու Երևանը առաջիկա տարիներին, և ամենակարևորը, ինչպիսի խաղ կանոններ են սահմանվում կառուցապատում իրականացնելու համար	1 տարի	✓ Երևանի անխտիր յուրաքանչյուր բնակիչ
6.2.	**Երևանի դիզայն-կոդի մշակում (urban design code)** Համատեղելով և ներդաշնակելով հինն ու նորը, անցյալը, ներկան ու ապագան՝ Երևանը ունենալու է միասնական և իրար հետ ներդաշնակ ճարտարապետական մոտեցումներ, որոնք արգելելու են Երևանի հետ կապ չունեցող, անճոռնի և մեր մշակույթի հետ կապ չունեցող կառույցները: Ընդգրկուն և համալիր այս փաստաթուղթը լայն հասարակական քննարկումներ է անցնելու, որպեսզի արտացոլվի յուրաքանչյուր երևանցու և Երևանը սիրողի ակնկալիքներն ու պատկերացումները	1.5 տարի	✓ Երևանի անխտիր յուրաքանչյուր բնակիչ
6.3.	**Հին և պատմամշակութային Երևանի վերականգնում** Երևանը պետք է ունենա իր պատմական շերտերը ընդգծող թաղամասեր, հատվածներ և տարածքներ: Սա մեր քաղաքը հանրահռչակելու ևս մեկ կարևոր ու առանցքային քայլ է:	5 տարի	✓ Հետիոտներ ✓ Շենքերի բնակիչներ ✓ Մասնավոր տների բնակիչներ ✓ Երիտասարդ ընտանիքներ ✓ Տարեցներ / թոշակառուներ ✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ ✓ Մշակութասերներ

			✓ Զբոսաշրջիկներ ✓ Մայրաքաղաքի հյուրեր
6.4.	**Կոնդ թաղամասի պահպանություն ու վերակառուցում** Երևանի պատմական ժառանգություն կրող թաղամասերից մեկը հոգածության կարիք ունի: Վերակառուցելով իր պատմական անցյալին համահունչ՝ տուրիստական և գործարար մեծ զարգացում կունենա թաղամասը:	4.5 տարի	✓ Կոնդի բնակիչներ ✓ Զբոսաշրջիկներ ✓ Մշակութասերներ ✓ Մասնավոր տների բնակիչներ
6.5.	**Այգիների վերածնավորում (ռե-բռենդինգ)՝ պատմական ժամանակաշրջաններին համահունչ** Խորհրդակցելով Երևանի բնակիչների և ազգագրագետների հետ, ընտրելով այգիները՝ դրանք կվերածնավորվեն մեր պատմության կարևորագույն և առանցքային ժամանակաշրջաններին համահունչ՝ տվյալ դարաշրջանի փոխանցելով ոգին և շունչը	Յուրաքանչյուր տարի առնվազն 3 զբոսայգի	✓ Հետիոտներ ✓ Մայրեր ✓ Առողջ ապրելակերպի սիրահարներ ✓ Շենքերի բնակիչներ ✓ Մասնավոր տների բնակիչներ ✓ Երեխաներ ✓ Դպրոցականներ ✓ Երիտասարդ ընտանիքներ ✓ Տարեցներ, թոշակառուներ ✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ ✓ Կանայք ✓ Մշակութասերներ ✓ Զբոսաշրջիկներ
6.6.	**Սեփական տների բնակելի հատվածներում, շենքերի բակերում բազմաբնակարան նոր շենքերի կառուցման արգելում** Երևանի զարգացման գլխավոր պլանի մեջ հստակորեն ամրագրվելու են այն հատվածները, որտեղ թույլատրվելու է բացառապես ցածրահարկ, սեփական տների կառուցապատում, և որևէ կերպ չի թույլատրվելու սեփական տների կողքին հերթական անդեմ և անշուք բազմահարկ շենքի կառուցումը, որը միայն անհարմարություններ է բերում տեղի բնակիչներին՝ խաթարելով ողջ քաղաքաշինական միջավայրը:	1 տարի	✓ Մասնավոր տների բնակիչներ

6.7.	**Old Town-ի կառուցում Էրեբունիում / Էրեբունի բերդաքաղաքի վերակառուցում** Երևանը պատմական սիրտ ունի, և այն գտնվում է Էրեբունիում: Մեր բերդաքաղաքն ու հարակից տարածքը պետք է վերականգնվի և վերակառուցվի:	1) Մինչև 2026 թվականը վերականգնման և վերակառուցման նախագծի կազմում 2) Սկսած 2026 թվականից՝ շինարարական աշխատանքների մեկնարկ	✓ Զբոսաշրջիկներ ✓ Մշակութասերներ ✓ Շենքերի բնակիչներ ✓ Մասնավոր տների բնակիչներ ✓ Երիտասարդ ընտանիքներ ✓ Տարեցներ / թոշակառուներ ✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ
6.8.	**Պատմական վայրերի հանրահռչակում (Կարմիր բլուր, Շենգավիթ, Պասկեւիչի բլուր և այլն)** Երևանի պատմությունը պետք է ներկայանալի դառնա: Այս ուղղությամբ հետևողական աշխատանքներ են տարվելու՝ համագործակցելով զբոսաշրջության և քաղաքային զարգացման առաջավոր մասնագետների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ	1) մինչև 2025 թվականը բարեկարգման և վերականգնման ենթական վայրերի քարտեզագրում և համալիր վերակառուցման նախագծի մշակում 2) Մինչև 2026 թվականը վերակառուցման ժամանակացույցի հաստատում 3) Մինչև 2028 թվականը առնվազն 3 պատմական վայրի վերակառուցում և հանրահռչակման լայն արշավ	✓ Զբոսաշրջիկներ ✓ Մշակութասերներ ✓ Գործարար հատված
6.9.	**«Հին Երևան» նախագծի ավարտ** Գործադրվելու են բոլոր ջանքերը՝ Երևանի վերքը դարձած այս նախագծի վերջնականացման ուղղությամբ	1) Մինչև 2025 թվականը նախագծի ավարտի ճանապարհային քարտեզի հաստատում 2) մինչև 2027 թվականը նախագծի առնվազն 50 տոկոսի ավարտ	✓ Զբոսաշրջիկներ ✓ Մշակութասերներ ✓ Գործարար հատված
6.10.	**Ճարտարապետական և պատմական արժեք ներկայացնող շենք-շինությունների, արձանների և հուշարձանների գիշերային լուսավորման նորացում** Պատմական արժեք ներկայացնող կառույցներն ու հուշարձանները ոչ միայն պետք է լինեն լուսավորված, այլև դրանց լուսավորությունը չպետք	1) մինչև 2028 թվականը աշխատանքների առնվազն 50%-ի ավարտ	✓ Հետիոտներ ✓ Շենքերի բնակիչներ ✓ Մասնավոր տների բնակիչներ ✓ Մշակութասերներ ✓ Զբոսաշրջիկներ

	Է լրացուցիչ բեռ հանդիսանա համայնքի բյուջեի համար: Արևային էներգիայի օգտագործումը լուծելու է այս կարևոր խնդիրը:		

7. ՀՈԳԱՏԱՐ ԵՐԵՎԱՆ

	Ծրագիրը, նկարագրությունը	Ժամկետ	Շահառուներ
7.1.	**Սոցիալական բնակարանաշինության ծրագրերի իրականացում** Քաղաքային իշխանությունները պարտավոր են խթանելու հասանելի բնակարանաշինությունը՝ հաշվի առնելով նաև Երևանի շենքային ֆոնդի իրավիճակը: Բնակարանները պետք է լինեն հասանելի բոլորի համար:	Ամեն տարի առնվազն 100 բնակարանի տրամադրում	✓ Շենքերի բնակիչներ ✓ Երիտասարդ ընտանիքներ ✓ Տարեցներ, թոշակառուներ ✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ
7.2.	**Մեծահասակների ժամանցի, սոցիալական ներառման միջոցառումների և ծրագրերի իրականացում** Տարեցների ժամանցի կազմակերպումն ու սոցիալ-մշակութային ինտեգրումը կարևորագույն հանրային ծառայություն է և Հոգատար Երևանի ուղղակի նպատակ	Յուրաքանչյուր տարի՝ առնվազն 10 միջոցառում	✓ Տարեցներ, թոշակառուներ և մեծահասակներ
7.3.	**15 րոպե քայլելու հասանելիությամբ պոլիկլինիկաներ, դպրոցներ և մանկապարտեզներ** Երևանի յուրաքանչյուր բնակիչ պետք է հնարավորություն ունենա ստանալ առաջնային հանրային ծառայությունները իր բնակվելու վայրից հնարավորինս մոտ: Մանկապարտեզների տեղերը պետք է ավելանան և պլանավորվեն նաև հետագա տարիներին երեխաների թվի աճի հետ պայմանավորված: Նպատակը տեղերի կտրուկ ավելացում, նախադպրոցական կրթություն չստացած երեխաների թվի նվազեցում մինչև 0:	3.5 տարի	✓ Մայրեր ✓ Երեխաներ ✓ Դպրոցականներ ✓ Երիտասարդ ընտանիքներ ✓ Տարեցներ / թոշակառուներ ✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ ✓
7.4.	**Մանկապարտեզների աշխատաժամանակի ավելացում մինչև 20:00** **Մսուր մանկապարտեզների վերականգնում** **Մանկապարտեզներում հերթագրում՝ առավելագույնը 2 ամիս**	1.5 տարի	✓ Մայրեր ✓ Երեխաներ

	Ոչ մի երեխա չպետք է դուրս մնա մանկապարտեզից, ոչ մի ծնող չպետք է աշխատանքային խնդիրներ ունենա՝ երեխային ժամանակին տուն տանելու հետ կապված:		
7.5.	**Դպրոցների և մանկապարտեզների տարածքներում անվտանգության տեսահսկման համակարգերի տեղադրում, արդիականացում** Հոգատար Երևանը առաջին հերթին անվտանգ Երևանն է: Դպրոցների, մանկապարտեզների և մարզամշակութային հաստատությունների տարածքներում անվտանգության համակարգերի տեղադրումը կմեծացնի երեխաների և դպրոցականների անվտանգությունը և կնպաստի հանցավորության մակարդակի նվազմանը:	1) մինչև 2027 թվականը հաստատությունների առնվազն 25%-ում անվտանգության համակարգերի տեղադրում և միացում Կառավարման կենտրոնին	✓ Մայրեր ✓ Երեխաներ ✓ Դպրոցականներ
7.6.	**Մշտական բնակության վայր չունեցողների համար կացարանների կառուցում, նոր սոցիալական համալիր ծառայությունների տրամադրում** Հոգատար Երևանում բոլորն են քաղաքի հոգածության ներքո՝ անկախ նրանից, թե կյանքի ինչ դժվարին իրավիճակում են հայտնվել	2.5 տարի	✓ Սոցիալապես խոցելի մարդիկ
7.7.	**Համայնքային սոցիալական ծառայությունների մատուցման բարելավում և դրանք մատուցող սոցիալական աջակցության համայնքային կենտրոնների ստեղծում** Սոցիալապես խոցելի և հատուկ խնամքի կարիք ունեցող մեր համաքաղաքացիները իրենց պաշտպանված իրենց պաշտպանված պետք է զգան Երևանում: Սոցիալական համալիր ծառայություններ մատուցող կենտրոնների ստեղծումը առաջնային և կարևոր քայլ է Աջակցող և հոգատար Երևան կառուցելու ճանապարհին:	3 տարի	✓ Սոցիալապես խոցելի մարդիկ ✓ Մայրեր ✓ Երեխաներ ✓ Դպրոցականներ ✓ Երիտասարդ ընտանիքներ ✓ Տարեցներ / թոշակառուներ ✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ
7.8.	**Գրադարան-սրճարանների կառուցում**	3 տարի	✓ Երեխաներ ✓ Դպրոցականներ ✓ Երիտասարդ ընտանիքներ ✓ Տարեցներ, թոշակառուներ

	Համայնքային գրադարանները դառնալու են երևանցիների ամենասիրելի վայրերը՝ շնորհիվ դրանց աշխատանքի վերաիմաստավորման և գրքի մշակույթի հանրահռչակման:		✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ ✓ Ընթերցողներ ✓ Մշակութասերներ ✓ Զբոսաշրջիկներ
7.9.	**Մշակույթ՝ հասանելի բոլորին** Բոլոր երևանցիները պետք է հասանելիություն ունենան քաղաքի մշակութային կյանքին՝ անկախ սոցիալական խմբերից: Մշակութային կյանքի հավասար հասանելիության ապահովումը տեղական իշխանությունների կարևոր առաքելություններից է:	Անհապաղ	✓ Երևանի անխտիր յուրաքանչյուր բնակիչ ✓ Մշակութասերներ ✓ Զբոսաշրջիկներ
7.10.	**Արցախյան ազատամարտի մասնակիցների (վետերանների) համար համակարգված արտոնությունների սահմանում** (անվճար հանրային տրանսպորտ, տեղական հարկեր, տուրքեր, վճարներ, կրթամշակութային հաստատություններում երեխաների անվճար հաճախում ու ուսուցում, մշակութային միջոցառումներին մասնակցության ապահովում) Երևանը պարտավոր է իր հոգածությունը ցույց տալ մեր բոլոր այն համաքաղաքացիներին, որոնք իրենց ամենաթանկն են դրել հայրենիքի պաշտպանության սուրբ գործում: Միաժամանակ, այդ հոգածությունը լինելու է արդար և հասանելի արցախյան ազատամարտի մասնակիցների բոլոր մասնակիցներին:	1 տարի	✓ Արցախյան ազատամարտի մասնակիցներ ✓ Արցախյան ազատամարտի մասնակիցների ընտանիքների անդամներ
7.11.	**Թոռակառուներին, խոցելի խմբերին հանրային ծառայություններից (տրանսպորտ, պոլիկլինիկա, մետրո, մշակութային և այլ ծառայություններ) անվճար օգտվում** Երևանը իր հոգատարությունը պետք է ցույց տա նաև մեր տարեց և սոցիալապես խոցելի խմբերի համաքաղաքացիներին, որոնք իրական կարիք ունեն ուշադրության և հոգածության: Նման մոտեցումը կարևոր նախաձեռնություն է մեր մեծահասակների սոցիալականացումը էլ ավելի բարձր մակարդակի հասցնելու գործում:	Աստիճանաբար՝ ըստ խմբերի և ծառայությունների 4 տարի	✓ Տարեցներ, թոշակառուներ ✓ Հաշմանդամություն ունեցող մարդիկ ✓ Սոցիալապես խոցելի մարդիկ ✓ Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մարդիկ

7.12.	**Կամավորության ինստիտուտի ներդրում** Երևանցիների սոցիալական պատասխանատվության դրսևորման կարևոր ձևերից է քաղաքային կառավարմանն ու ծառայությունների մատուցման ժամանակ կամավորության իրականացումը: Դրա հանրահռչակումը առանցքային արժեք է հատկապես երիտասարդ սերնդի համար:	1.5 տարի	✓ Դպրոցականներ ✓ Ուսանողներ ✓ Երիտասարդներ
7.13.	**Գերեզմանատեղերի հատկացման ընթացակարգերի կանոնակարգում** Երևանում հանգուցյալներին հուղարկավորելը չպետք է վերածվի գումարներ «շորթելու» հանցավոր գործընթացի:	Հրատապ	✓ Երևանի անխտիր յուրաքանչյուր բնակիչ
7.14.	**Food Bank-երի համակարգի ներդրում** Երևանում սոցիալապես խոցելի մարդիկ պետք է գտնվեն նաև իրենց համաքաղաքացիների անմիջական ուշադրության տակ: Այս համակարգի ներդրումը թույլ կտա ամենօրյա ռեժիմով հնարավորություն ստեղծել խոցելի մարդկանց համար ապահովել իրենց օրվա սննդի հարցը՝ տրամադրված իրենց իսկ համաքաղաքացիների կողմից	2.5 տարի	✓ Սոցիալապես խոցելի մարդիկ

8. ԲԱՐԵԿԱՐԳ ԵՐԵՎԱՆ

	Ծրագիրը, նկարագրությունը	Ժամկետ	Շահառուներ
8.1.	**Համատիրության կողմից գանձվող վճարների վերացում** Շենքերում և բակերում ամենօրյա մաքրության իրականացում Բազմաբնակարան շենքերի սպասարկման մոդելը պետք է վերանայվի և բարելավվ, իսկ համատիրությունների գործունեության ձևաչափը արմատական փոփոխություններ կրի: Երևանը չպետք է բազմաբնակարան շենքերի բնակիչներին մենակ թողնի իրենց շենքերի խնդիրների հետ:	1) Մինչև 2025 թվականը համատիրությունների վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն և ՀՀ ԱԺ 2) Սկսած 2025 թվականից՝ համատիրությունների գործունեության արմատական վերանայում	✓ Բազմաբնակարան շենքերի բնակիչներ
8.2.	**Ճարտարապետահատակագծային առաջադրանքի (ԱՊՁ) տրամադրման անհրաժեշտության վերացում. հասանելի գլխավոր հատակագիծ** Երևանի զարգացման մաստեր-պլանի կազմման և մշակման, ինչպես նաև թույլատրելի սահմաններում գլխավոր հատակագծի հանրայնացումից հետո Ճարտարապետահատակագծային առաջադրանքի (ԱՊՁ) տրամադրման անհրաժեշտություն այլևս չի լինելու:	1.5 տարի	✓ Կառուցապատողներ ✓ Շինարարներ ✓ Անհատ կառուցապատողներ
8.3.	**Կապի մալուխների անցկացում մայթերի տակ, ստորգետնյա խողովակաշարերի ցանց** Փողոցների գիշերային լուսավորության սյուների վրայով անցնող կապի բոլոր մալուխները պետք է անցկացվեն ստորգետնյա եղանակով, սակայն ոչ թե անորակ պլաստիկե խողովակների մեջ, այլը հատուկ	Սկսած 1-ին իսկ տարվանից	✓ Երևանի անխտիր բոլոր բնակիչները ✓ Կապի օպերատորներ ✓ Գործարար հատված

	պատրաստված բետոնե կառուցվածքների (խողովակաշարերի) մեջ, որպեսզի բացառվի որևէ արտաքին ազդեցությամբ դրանց վնասումը գետնի տակ: Իսկ նման կառուցվածքներով լարանցումները բացառելու են փողոցների անընդհատ քանդումը, քանի որ նախապես հաշվարկված ուղիներով հնարավոր է անցկացել նոր մալուխները: Երևանի փողոցներում մարդկանց տեսադաշտում պետք է լինի երկինքը, ոչ թե մալուխների քաոտիկ սարդոստայնը:		
8.4.	**Ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցում** Երևանում ավտոմեքենաները պետք է կայանելու տեղ ունենան, և սա քաղաքային իշխանություններին վերապահված խնդիր է: Ավտոկայանատեղերի անհրաժեշտ քանակի հայեցակարգի մշակումից հետո սկսվելու է ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցումը, որոնք քաղաքի ծանրաբեռնված հատվածներում պետք է ապահովեն վարորդների հարմարավետությունը և անվտանգությունը	Յուրաքանչյուր տարի՝ 1000 մեքենայի հաշվարկով	✓ Վարորդներ ✓ Հետիոտներ ✓ Շենքերի բնակիչներ
8.5.	**Ազբոշիֆրերի վերացում տանիքներից** Երևանը վերջապես պետք է ազատվի իր բնակիչների կյանքին ամենօրյա ռեժիմով սպառնացող վտանգից: Ազբեստե շիֆրերը հատուկ կերպով օր առաջ պետք է հեռացնել և վնասազերծել՝ օգտագործելով ամենաառաջավոր փորձը	Յուրաքանչյուր տարի շենքերի առնվազն 10%	✓ Երևանի անխտիր բոլոր բնակիչները
8.6.	**Շենքերի արտաքին պատերի վրա հասցեների ցուցանակների տեղադրման պարտադիր պայմանի սահմանում** Երևանում բազմաթիվ են շենքերն ու կառույցները, որոնց վրա նշված չեն հասցները՝ չնայած իրավական	1.5 տարի	✓ Երևանի անխտիր բոլոր բնակիչները ✓ Զբոսաշրջիկներ

	կարգավորումներին: Այս առումով ոչ միայն պետք է խիստ վերահսկողություն սահմանել, այլև սահմանել հասցեների ցուցանակների միասնական օրինակելի լուծումներ, օգնել մարդկանց և տնտեսավարողներին իրենց շենք-շինությունների վրա տեղադրել քաղաքային դիսայն կոդին համահունչ վահանակներ		